

## Չբոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարները

Հարգելի՛ ներկաներ,

Պետք է ի սկզբանե ասեմ, որ որ զբոսաշրջությունը ընդհանրապես բնական, մարդուն զվարճացնող, հանգիստ տրամադրող և ուրախ պահող ազդակ պետք է լինի:

Ես կփորձեմ այս համատեքստում կառուցել իմ խոսքը: Այսօր պարոն Սեմ Սամուելյանն ասաց, որ պետք է զբոսաշրջությունը Հայաստանում ունենա նախարարություն և սա մեծ անհրաժեշտություն է: Անշուշտ ես առաջարկեցի, որ եթե նախարար չունեք ես կգամ և կլինեմ նախարար, ինդիք չկա (ծափահարություն):

Հարցը հետևյալն է, որպեսզի կարողանանք զբոսաշրջությունը զարգացնել, և ես համոզված եմ, որ Հայաստանն ու Արցախը մեծ հնարավորություններ ունեն դրա համար, պետք է այդ աշխատանքի համար ռուսուրներ ներդնել: Ինչու՞ եմ այս ամենն ասում, որովհետև տասն ամիսների իմ փորձառությամբ ես հասկանում եմ, որ եթե նախարարն իր նախարարության մեջ զանազան ենթաբաժիններ ունենա, ենթաբաժանման պետն արագ կահանի իր ղեկավարին, որպեսզի իր ծրագիրը ներկայացնի և աշխատանքներին օգնի և դրանք համակարգի: Հակառակ դեպքում ղեկավարը, որ այս պարագայում տիկին Ջեյրունցյանն է, ինքն իր ճիգերով կանի այն ինչ կանի, և ես կարծում եմ, որ մեծ աշխատանք կանի, բայց, եթե լինի նախարարություն, ես հավատում եմ, որ այս աշխատանքն ավելի բարեհաջող և արդյունավետ կլինի: Ինչու՞ եմ ասում, որովհետև զբոսաշրջությունը չի կարելի ասել, որ 3 ամսվա կամ 6 ամսվա համար է: Եթե երկիրը պետք է զարգանա զբոսաշրջությամբ, ապա տարին 12 ամիս պետք է ունենա զբոսաշրջիկ: Տարին 12 ամիս զբոսաշրջիկ ունենալու համար պետք է բազմազանություն ստեղծել: Ես կարծում եմ, որ Հայաստանը և Արցախը ինքնաբերաբար ունեն այդ բազմազանությունը:

Այսինքն, կարելի է սկսել կրոնական զբոսաշրջությունից, ապա անցնել մշակութային զբոսաշրջության, կարելի է Հայաստանը վերածել խորհրդածոյակների կենտրոնի, բնականաբար նաև մի վայր, որտեղ զբոսաշրջիկը հաճույք կստանա:

Ձմեռային շրջանում ձյուն ունենք և դա կարելի է օգտագործել: Մարդիկ մեծ գումարներ են վճարում դրա համար: Վերջերս իմացա, որ որսի հնարավորություններ կան այստեղ և պատկերացրեք, որ եթե մեկը որսի նկատմամբ հետաքրքրություն ունի և ուզում է ճամփորդել և որս անել, նա 10 հազար դոլար է վճարում: Ես իմացա, որ այստեղ կարելի է մեկ շաբաթվա համար ամեն ինչ ապահովել 1000-1500 դոլարով, որին ավելացրած ավիոտոմս՝ 500 դոլար: Այս տեսակ փափեթը շատ հանգիստ 4000 դոլարով կարելի է վաճառել: Մեծ թվով ոչ հայեր և այլազգիներ Հայաստան են գալիս ուսման

համար և դա նույնպես մեծ հնարավորություններ կստեղծի զբոսաշրջության զարգացման համար:

Լիբանանը Հայաստանի նման բնական հարստություն չունի: Ինչու՞ եմ նույնացնում, որովհետև հավատում եմ, որ զբոսաշրջությունը, ինչպես Լիբանանում, այնպես էլ Հայաստանում կարող է դառնալ ընդհանուր տնտեսական զարգացման ազգակը, որն աշխատեցնում է տնտեսության բոլոր օղակները: Այսինքն, եթե մենք հաջողենք զբոսաշրջության ոլորտի զարգացման մեջ, կարելի է նաև ներդրումներ բերել Հայաստան: Մենք կարող ենք այդպիսի օղակ աշխատեցնել և դա այստեղ շատ հեշտությամբ կարող ենք անել:

Իմ համոզումը հետևյալն է, որ երկրի համար պետք է ստեղծել երկրի տուրիզմի պրոդուկտը (բրենդը), պետք է հստակեցվի, թե ի՞նչ տեսակի տուրիզմի համար պետք է մարդիկ Հայաստան գան: Երկրորդ, պետք է ճշտել նաև այն երկրները, որոնք մեզ համար հաճախորդ են: Լիբանանի համար, օրինակ Միջին Արևելքի երկրները, Ծոցի երկրները շատ մեծ մթերանոց են տուրիզմ հայթայթելու համար, բայց մենք խնդրի աջատ կանգնեցինք, երբ այդ մարդկանց հետ քաղաքական խնդիր ունեցանք: Ուղղակի մեր տուրիզմը անկում արձանագրեց: Ուրեմն, այսօր մենք նոր շուկաների փնտրտուքի մեջ ենք և մեզ համար, օրինակ Չինաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը նոր շուկաներ են: Չինաստանից տարեկան 200 մլն. տուրիստ է դուրս գալիս: Եթե մենք այդ 200 մլն-ից 1 տոկոսը Լիբանան բերենք, մյուս մեկ տոկոսը Հայաստան, խնդիր չենք ունենալու և մեր բոլոր հարցերը կլուծվեն: Ուրեմն պետք է աշխատել այդ երկրների վրա: Պետք է մեզ ծանոթացնենք այդ երկրներին: Պետք է գնալ այդ երկրների տուր օպերատորների մոտ ու վաճառել մեր պրոդուկտը: Մի պարզ բան ասեմ. երբ Կիպրոսի տուրիզմի նախարարը մեզ մոտ էր (Լիբանանում), ես հարցրեցի, թե դուք ինչպե՞ս եք հաջողում տարեկան 800 հազար ռուս տուրիստ բերել Կիպրոս: Կիպրոսը մեզանից ընդամենը քարոք ժամ է հեռու ինքնաթիռով, մենք հազիվ 40 հազար տուրիստ ենք բերում: Նա պատասխանեց՝ ասելով, որ մենք տեսանք, որ այդ երկրներում մարդիկ արև տեսնելու և տաք ավազի ու մաքուր ծովի կարիք ունեն: Մենք դա ունենք, ռուսներն էլ դրա կարիքը ունեն: Մենք գնացինք այնտեղ, գտանք այն մարդկանց, որոնք տուրիզմի սեկտորի մեջ հիմնական դերակատարներն էին, իրենց միջոցով քարոզչություն կատարեցինք և իրենց գոհացնող կամ խանդավառող առաջարկներ արեցինք: Այսինքն ասացինք, որ յուրաքանչյուր չարտերային չվերթ, որով 200 հոգի կգա, մեկ անձի համար կվճարենք 25 դոլար կամ չարտերային չվերթի համար ընդհանուր 5000 դոլար: Երեք տարի անընդհատ այս վճարումը կատարում են և այսօր դրա արդյունքներն են քաղում:

Մենք հիմա Լիբանանում այս փուլի մեջ ենք, և պետք է նույն բանն անել նաև Հայաստանում: Պետք է գնալ, փնտրել տաք երկրներից մարդկանց, ովքեր կզան այստեղ և այստեղի ձմեռային եղանակը կվայելեն: Չի կարելի զբոսաշրջությունը զարգացնել

նստած, չի կարելի ենթադրել, որ զբոսաշրջությունը կզարգանա միայն հեռուստատեսությամբ գովազդելով, այլ պետք է պրոդուկտ ստեղծել և պրոդուկտը հասցնել այն երկրները, որտեղից ուզում եք մարդ բերել, և միայն դրանից հետո քարոզչություն անել: Այս դեպքում կարող ենք քաղել արդյունքը: Եթե հաջողվի զբոսաշրջության զարգացումը, կզարգանա տնտեսությունը, կավելանան ներդրումները: Եթե, Սերգեյ ջան<sup>1</sup>, այս ընթացքը հաջողվի, դուք էլ Արցախում կօգտվեք: Այս դեպքում այլևս չեք հենվի միայն սփյուռքի վրա: Նույն խնդիրը մենք ունենք Լիբանանում, Լիբանանը 10 մլն. սփյուռք ունի: Ես միշտ ասում եմ, որ, եթե տարին 1 մլն. մարդ գա, մենք խնդիր չենք ունենա, այնպես ինչպես դուք եք ասում, որ յուրաքանչյուր սփյուռքահայ տարին մեկ անգամ գա, մեր խնդիրները կլուծվեն, բայց պետք է ասեմ, որ սա կապված է հարցի էմոցիոնալ կողմի հետ, սակայն պետք է բիզնես անել: Պետք է մտածել, թե այս գործը ինչպե՞ս է զարգանալու և հարատևելու: Այս ամենի հետ միասին, մեկ այլ խնդիր էլ կա: Ես լսեցի, որ 2016-ին 1.260.000 տուրիստ եք ունեցել Հայաստանում, խոսվեց 2.600.000-ի մասին 2020 թվականի համար: Ասեմ, որ հնարավոր չէ, ոչ թե որ այդ թիվը չեք կարող ապահովել, այլ ենթակառուցվածքների հնարավորություն չունեք այդքան մարդ ընդունելու՝ օդանավակայանից սկսած: Նույն խնդիրը մենք ունենք Լիբանանում՝ Լիբանանի մեր օդանավակայանն այսօրվա կառուցմամբ 6 մլն. մարդու կարող է սպասարկել, բայց մենք այս տարի արդեն ունենք 10 մլն.: 2.600.000-ը, եթե միայն տուրիստ է, ապա օդանավակայանի եռուզեռը պետք է 4.500.000 շուրջ լինի: Եթե նախատեսված է այդպես, ապա զուգահեռ պետք է այլ բան անել:

Ես հավատում եմ, որ, իսկապես Հայաստանին բան չի պակասում, որ այս տարածաշրջանում Վրաստանի նման լինի տուրիստ գտնող, կամ տուրիստներին գրավող երկիր: Ճիշտ է մենք ծով չունենք, բայց այլ բաներ ունենք, որ մարդկանց կարող ենք գրավել, որովհետև շատ մեծ է այն տուրիստների թիվը, որոնք հետաքրքրված են կրոնական, մշակութային և նմանօրինակ տուրիզմով: Հայաստանը բոլոր տվյալներն ունի այս հարցերը լուծելու համար: Ես կարծում եմ, որ Լիբանանը և Հայաստանն իրար ամբողջացնող ազդակներ ունեն: Ասեմ, որ անցյալ տարի Հայաստանից Լիբանան 11.000 տուրիստ է այցելել: 2012-ին այդ թիվը 1350 էր: Այս տարի առաջին 8 ամիսներին արդեն 10.000 է: Բնականաբար Լիբանանից Հայաստան ավելի մեծ է:

Եզրակացնելով ասեմ, որ քաղաքական հարթության վրա կարող են լինել մարդիկ, որ տուրիզմի նախարարությունը կհամարեն երկրորդական, երրորդական, չորրորդական կարգի նախարարություն, առնվազն Լիբանանում այդպես է: Ես ձեզ վստահեցնում եմ, որ Լիբանանում տուրիզմի նախարարությունը կարող է դառնալ ամենահիմնական նախարարություններից մեկը, որովհետև փոքր ջանքերով

---

<sup>1</sup> Խոսքը Արցախի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Սերգեյ Շահվերդյանի մասին է:

կարողանում է երկիրն իսկապես աշխուժացնել: Վստահ եմ, հավատում եմ և գիտեմ, որ  
Հայաստանում էլ նույնը պիտի լինի:

Շնորհակալություն:

**Ավետիս Կիտանյան**

**Լիբանանի զբոսաշրջության նախարար**